



Թանգարանի արդի գիտական ցուցադրությունը ստեղծվել է 1982թ. (հեղ.՝ պատմ. գիտ. դոկտոր Ստեփան Եսայան), ներկայացնում է նախաուրարտական, ուրարտական, աքեմենյան և վաղ հայկական ժամանակաշրջաններով թվագրվող հնագիտական առարկաներ: Մշտական ցուցադրությունը զբաղեցնում է 570 քառ. մ մակերես՝ ներառյալ ներքին բակում կազմակերպված բացօթյա ցուցադրությունը (140 քառ. մ): Ծանոթությունը մշտական ցուցադրության հետ սկսում է ուրարտական գերագույն աստված Խալդի և պատերազմի աստված Թեյշեբայի բարձրաքանդակներից (հեղինակ՝ Կամո Գյանջյան) և Էրեբունի ամրոցի խցաններից պատրաստված մանրակերտից (վերակազմությունը՝ Կ. Հովհաննիսյանի, գործ՝ Համիկ Նալջյանի) : 1968թ. Փարիզի Լուվրի թանգարանում, ապա 1970թ. Մոնրեալում մանրակերտն արժանացել է Մեծ մրցանակի:

649 հնագիտական իրերով ստեղծված մշտական ցուցադրությունը այցելուին ներկայացնում է Ուրարտուի պատմության, զարգացած տնտեսության, ճարտարապետության ու կերպարվեստի, ոռոգման և ամրաշինական համակարգերի, շինարարական տեխնիկայի, որմնանկարչության, խեցեգործության և այլ բնագավառներում պետության առաջընթացի մասին վկայող նյութեր են ապացույցներ:

Այցելուն այստեղ կարող է տեսնել Էրեբունիի պեղումներից հայտնաբերված 23 սեպագիր արձանագրություններից 7-ը՝ ներառյալ Երևան քաղաքի ծննդյան վկայագիր համարվող արձանագիր քարը. (վերծանությունը՝ ուրատագետ Մարգարիտ Իսրայելյանի):

1998 թվականից մշտական ցուցադրության մաս են կազմում նաև Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի վրա գտնվող, գործարանի տարածքում 1984թ. իրականացված շինարարական աշխատանքների ընթացքում դիպվածով բացված ուրարտական դամբարանից պեղված նյութերը՝ ծիսական նշանակության ցլազլուխ և առյուծազլուխ աճյունասափորները:

Թանգարանի մշտական ցուցադրության առանձին բացառիկ նմուշներ բազմիցս ժամանակավորապես արտահանվել և ցուցադրվել են ԱՄՆ, Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության հեղինակավոր թանգարաններում և ցուցասրահներում: